ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 140** քաղ. Մոսկվա

Ժամանակավորապես ներմուծվող քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռների առանձին տեսակների նկատմամբ Մաքսային միության հանձնաժողովի որոշ որոշումներում եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 88 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ կետին, 282-րդ հոդվածի 1-ին կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկում կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) 26-րդ կետում՝

«մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 31-ը եւ նշված ամսաթիվը 5 տարուց ոչ ավելի գերազանցող ժամկետով» բառերը փոխարինել «2013 թ. նշված ինքնաթիռները կարող են օգտագործվել Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության տարածքի սահմաններում, որի մաքսային մարմնի կողմից դրանք ձեւակերպվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային

ընթացակարգով, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ փոխադրումներ եւ (կամ) միջազգային փոխադրումներ իրականացնելու համար:» բառերով.

ավելացնել երկրորդ պարբերություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Այդպիսի ինքնաթիռների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատման առավելագույն ժամկետն է 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:».

բ) 33-րդ կետում՝

առաջին պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նախադասությամբ՝ «Նշված ինքնաթիռները կարող են օգտագործվել Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության տարածքի սահմաններում, որի մաքսային մարմնի կողմից դրանք ձեւակերպվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ փոխադրումներ եւ (կամ) միջազգային փոխադրումներ իրականացնելու համար:».

երկրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Այդպիսի ինքնաթիռների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատման առավելագույն ժամկետը կազմում է 10 տարի՝ ինքնաթիռները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից:».

գ) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 33^1 կետ՝

«33^1. Քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռներ, որոնք դասակարգվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5, 8802 40 003 6 եւ 8802 40 004 6 ծածկագրերով՝ բացառությամբ օդանավերի թռիչքային պիտանելիությունը պահպանելու համար պատասխանատու լիազորված անձի կողմից հաստատված ուղեւորների տեղավորման սխեմայում (LOPA) նշված 50-ից ավելի եւ 110-ից պակաս առավելագույն քանակությամբ նստատեղեր ունեցող օդանավերի, Եվրասիական

տնտեսական միության անդամ պետությունների արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից պայմանագրեր կնքելու եւ մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ինքնաթիռները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում: Նշված ինքնաթիռները կարող են օգտագործվել Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության տարածքի սահմաններում, որի մաքսային մարմնի կողմից դրանք ձեւակերպվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջեւ փոխադրումներ եւ (կամ) միջազգային փոխադրումներ իրականացնելու համար:

Այդպիսի ինքնաթիռների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատման առավելագույն ժամկետը կազմում է 5 տարի՝ ինքնաթիռները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից:»:

2. «Քաղաքացիական ուղեւորատար օդանավեր ներմուծելու դեպքում սակագնային արտոնությունների, մաքսատուրքերից, հարկերից լրիվ ազատման, ինչպես նաեւ ժամանակավոր ներմուծման ժամկետների հետաձգման ու առանձին մաքսային ընթացակարգերի կիրառման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 16-ի թիվ 328 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

3. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 375 որոշմամբ հաստատված ապրանքների այն կատեգորիաների ցանկը, որոնց համար սահմանվում են ժամանակավոր ներմուծման ավելի երկար վերջնաժամկետներ, քան Մաքսային միության մաքսային օրենսգրքով սահմանված ժամկետները, լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12^1-12^3 դիրքերով՝

«12[1].	Ժամանակավորապես ներմուծվող քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռներ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5, 8802 40 003 6 եւ 8802 40 004 6 ծածկագրեր)՝ բացառությամբ օդանավերի թռիչքային պիտանելիությունը պահպանելու համար պատասխանատու լիազորված անձի կողմից հաստատված ուղեւորների տեղավորման սխեմայում (LOPA) նշված 50-ից ավելի եւ 111-ից պակաս եւ 170-ից ավելի ու 219-ից պակաս առավելագույն քանակությամբ նստատեղեր ունեցող օդանավերի, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից պայմանագրեր կնքելու եւ մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 31-ն այն ինքնաթիռները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում, որոնց համար տրամադրվել է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատում՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ՝ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկի 26-րդ կետին համապատասխան	մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ
12[2].	Ժամանակավորապես ներմուծվող քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռներ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5, 8802 40 003 6 եւ 8802 40 004 6 ծածկագրեր)՝ բացառությամբ օդանավերի թռիչքային պիտանելիությունը պահպանելու համար պատասխանատու լիազորված անձի կողմից	10 (տասը) տարի

	հաստատված ուղեւորների տեղավորման սխեմայում (LOPA) նշված 50-ից ավելի եւ 110-ից պակաս առավելագույն քանակությամբ նստատեղեր ունեցող օդանավերի, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից պայմանագրեր կնքելու եւ մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ն այն ինքնաթիռները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում, որոնց համար տրամադրվել է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատում՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ՝ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկի 33-րդ կետին համապատասխան	
12^3.	Քաղաքացիական ուղեւորատար ինքնաթիռներ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5, 8802 40 003 6 եւ 8802 40 004 6 ծածկագրեր)՝ բացառությամբ օդանավերի թռիչքային պիտանելիությունը պահպանելու համար պատասխանատու լիազորված անձի կողմից հաստատված ուղեւորների տեղավորման սխեմայում (LOPA) նշված 50-ից ավելի եւ 110-ից պակաս առավելագույն քանակությամբ նստատեղեր ունեցող օդանավերի, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից պայմանագրեր կնքելու եւ մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 31-ը	5 (հինգ) տարի»:

ներառյալ այն ինքնաթիռները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում, որոնց համար տրամադրվել է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատում՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ՝ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկի 33[1]-րդ կետին համապատասխան

4. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկի 26-րդ, 32-35-րդ կետերի խմբագրությունների գործողության ժամանակահատվածների ցանկի 26-րդ եւ 33-րդ կետերի համարներով դիրքերում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 88 որոշման հավելված) «՝» նշանը փոխարինել «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 140 որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթիվ» բառերով:

5. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Սույն Որոշման 1-ին կետի «ա» ենթակետի եւ 3-րդ կետի դրույթները (12[1] դիրքով լրացման մասով) տարածվում են այն իրավահարաբերությունների վրա, որոնք առաջացել են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 16-ի թիվ 328 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եւ կապված են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ

պայմանական ազատմամբ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկի 26-րդ կետում նշված քաղաքացիական ուղեւորատար օդանավերը «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու հետ՝ բացառությամբ այն ինքնաթիռների, որոնց մաքսային մարմնի կողմից սահմանված ժամանակավոր ներմուծման ժամկետը լրացել է սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ:

Սույն Որոշման 1-ին կետի «բ» ենթակետի եւ 3-րդ կետի դրույթները (12^2 դիրքով լրացման մասով) տարածվում են այն իրավահարաբերությունների վրա, որոնք առաջացել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հունվարի 31-ի թիվ 6 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եւ կապված են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 331 որոշմամբ հաստատված մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ ժամանակավորապես ներմուծվող ապրանքների ցանկի 33-րդ կետում նշված քաղաքացիական ուղեւորատար օդանավերը «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու հետ՝ բացառությամբ այն ինքնաթիռների, որոնց մաքսային մարմնի կողմից սահմանված ժամանակավոր ներմուծման ժամկետը լրացել է սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ:

Սույն Որոշման 1-ին կետի «գ» ենթակետի եւ 3-րդ կետի դրույթները (12^3 դիրքով լրացման մասով) տարածվում են այն իրավահարաբերությունների վրա, որոնք առաջանում են 2017 թվականի հունվարի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Ա. Մամին	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով